ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Արևիկ Անափիոսյան

2.Զբաղեցրած Պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

3.Գործուղման Վայրը և Ժամկետները

ԱՄՆ, Լոս Անջելես,

մայիս 17-20, 2019

4.ՀրավիրողԿողմը

Հարավային Կալիֆոռնիայի համալսարան

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Նորարար Հայաստան ծրագրի շրջանակում անցկացվող միջոցառումներին:

6.Քննարկված Թեմաները

1. Նորարար Հայաստան ծրագրի շրջանակներում ելույթ եմ ունեցել և ներկայացրել կրթության քաղաքականության և կրթության ոլորտում Հայաստանի

Հանրապետության բարեփոխումների օրակարգը: Ելույթի ժամանակ ընդգծվել է վաղ մանկության զարգացման կենտրոնների կարևորությունը կրթության և ուսումնառության արդյունքների որակի ապահովման տեսակետից: Միևնույն ժամանակ, ընդգծվել է կրթության որակի սահմանման ուղենիշները, որոնց շուրջ կառուցվում են կրթության ոլորտում բարեփոխումները:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կրթական բարեփոխումներին անդրադառնալիս, կարևորվել է հանրակրթության չափորոշչի վերանայումը, որը իրականացվում է նորարարական մոտեցումների ներգրավմամբ, ինչպիսին է օրինակ «Կրթություն հանուն կայուն զարգացման» դիտանկյունը, կրթության ներառականությունը, կրթական նյարդագիտությունը:

Կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներից հաջորդը, որ ներկայացվել է ելույթի ժամանակ նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումն է: Մասնավորապես, նշվել է, որ Հայաստանի զարգացման համար անկյունաքարային է աշխատաշուկայի և կրթության կապի ամրապնդումը, ինչը հնարավոր է իրականացնել, եթե գործատուները իրենց զարգացման ուղղությունները հասանելի դարձնեն կրթական հաստատությունների համար, և կրթական հաստատություններն էլ համագործակցեն գործատուների հետ, մասնավորապես ծրագրերի մշակման և լրամշակման, ինչպես նաև աշխատանքի հիման վրա ուսուցման կազմակերպման նպատակով: Սա կնպաստի մրցունակ մասնագետների պատրաստմանը:

2. Հանդիպում է տեղի ունեցել Լոս Անջելեսի Միավորված Դպրոցների Շրջանի (Los Angeles Unified School District) ներկայացուցիչների հետ, որի ժամանակ քննարկվել են ուսուցիչների վերապատրաստման և հայոց լեզվի դասագրքերի տրամադրման նոր մոտեցումների հնարավորությունները: Համաձայնություն է ձեռք բերվել, որ կմշակվեն դասագրքեր՝ հաշվի առնելով Միավորված Դպրոցների Շրջանի

ներկայացված առաջարկներն ու կարիքները, իսկ դասագրքերը ձեռք կբերվեն ըստ գոյություն ունեցող ընթացակարգերի:

3. Հանդիպում է տեղի ունեցել Արթինե Սամքյանի հետ: Քննարկվել է Հայաստանի Հանրապետության ասպիրանտ ուսանողների համար նոր մոդուլների մշակման հնարավորությունը, որոնք նպատակ կունենան զարգացնել հետազոտական կարողություններն ու հմտությունները: Համաձայնություն է ձեռք բերվել ստեղծելու հետազոտության մեթոդաբանության մոդուլ՝ 3 հիմնական ուղղություններով.

1. Հետազոտության մեթոդաբանության ներածություն
2. Որակական հետազոտության մեթոդաբանություն
3. Քանակական հետազոտության մեթոդաբանություն:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

4. Հանդիպում Վլում (Vlume) կազմակերպության հիմնադիրների հետ, ովքեր իրականացնում են հայալեզու գրականության թվայնացում օնլայն հարթակում: Նպատակը օնլայն ընթերցողներին հայալեզու գրականության ապահովումն է: Հարթակում ներառվելու են հայ գրականության պարտադիր ընթերցանության նյութերը: Միևնույն ժամանակ քննարկվել է հայ գրականության պարտադիր ընթերցանության նյութերի խաղային պլատֆորմի ստեղծման գաղափարը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել փորձնական ծրագիր մշակել Հայաստանի դպրոցներում հարթակի հնարավոր ստեղծման նպատակով:

5. Հանդիպում է տեղի ունեցել Հայկական Կրթական Ինստիտուտի (Armenian Education Institute) ներկայացուցիչների հետ: Հայկական Կրթական Ինստիուտի կողմից առաջարկվել է աջակցություն կրթության ոլորտում, մասնավորապես դպրոցների համալրում, կառուցում կամ վերակառուցում: Միևնույն ժամանակ,

ներկայացվել է կառավարության կողմից իրականացվող ընթացիկ ծրագրերը և առաջարկվել է ուսումնասիրել կառավարության ծրագրից բխող միջոցառումների ցանկը, ինչը կօգնի համագործակցությունը դարձնել ավելի արդյունավետ և համաժամանակեցնել ջանքերը կրթության բարելավման ուղղությամբ:

6. Հանդիպում է տեղի ունեցել Ջուլի Սլայթոնի հետ ուսուցիչների վերապատրաստման/մասնագիտական զարգացման նոր մշակվող համակարգի (In-service Teacher Training) հիմնական սկզբունքների մշակման, հստակեցման նպատակով: Քննարկումն ընդգրկել է ուսուցիչների, այն է՝ մեծահասակների կրթության հնարավոր ուսումնական պլանի ստեղծման գաղափար: Հավանական է հետագայում նաև ԵՄ-ն ի նպաստ նորարարության ծրագրի շրջանակներում նոր համագործակցություններ:

7. Հանդիպում է տեղի ունեցել Կրթության նյարդագետ Մարի Հելեն Իմմորդինո Յանգի հետ, ով ողջունել և վերահաստատել է նյարդագիտության ոլորտում իրականացվող հետազոտությունների կարևորությունը կրթության քաղաքականության մշակմանն ու բարեփոխումներին տեղեկացնելու տեսանկյունից:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Լոս Անջելես Միավորված Դպրոցների Շրջանի (Los Angeles Unified School District) ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել հետևյալ ոլորտում՝

ա. Հայալեզու դասագրքերի մշակում՝ հիմք ընդունելով առաջարկված բովանդակային կարիքները, պահանջները:

Կրթության նյարդագետ Մարի Հելեն Իմմորդինո Յանգի հետ հանդիպման արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն, որ տիկին Իմմորդինո Յանգը կաջակցի մեր աշխատանքային խմբին միջնակարգ կրթության բարեփոխումների իրականացման ժամանակ, մասնավորապես միջնորդելով մասնագիտացված կառույցների և պետության միջև համագործակցության նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը. ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

- Ուսուցիչների վերապատրաստման դասընթացի (In-service Teacher Training) մասնագետի հետ հանդիպման ժամանակ առաջարկվել է համագործակցություն՝ ԵՄ-ն ի նպաստ նորարարության ծրագրի շրջանակներում:
- Վլում (Vlume) կազմակերպության հիմնադիրների հետ հանդիպման ժամանակ առաջարկվել է հայ գրականության պարտադիր ընթերցանության նյութերի խաղային պլատֆորմի ստեղծում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

X _____